ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT

AraratBank

ՓԱՍՏԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- Ընդհանուր ակտիվները մեկ տարվա ընթացքում աճել են 0.9%-ով և կազմել 423,263 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 12.4%:

- Ընդհանուր պարտավորությունները 2024թ.-ի համեմատ նվազել են 1.5%-ով և կազմել 344,529 մլն ՀՀ դրամ, իսկ 2015թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 12.1%:

- Հաճախորդներին տրված վարկերը հաշվետու տարում ավելացել են 7.4%-ով և կազմել 234,157 մլն ՀՀ դրամ, իսկ միջին աճի տեմպը վերջին տասը տարիների համար կազմել է 13.5%:

- Արժեթղթերում ներդրումները ավելացել են 14.9%-ով և կազմել 60,897 մլն ՀՀ դրամ: 2015թ.-ից սկսած միջին աճի տեմպը ևս կազմել է 14.9%:

- Բանկի կողմից ներգրավված ժամկետային ավանդները աճել են 3.2%-ով և կազմել 151,821 մլն ՀՀ դրամ, իսկ 2015թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 20.7%: Ֆիզիկական անձանց միջոցները մեկ տարում աճել են 6.0%-ով, իսկ իրավաբանական անձանց միջոցները նվազել են 9.4%-ով: Ցպահանջ հաշիվների մնացորդները նվազել են 10.4%-ով և կազմել 128,261 մլն ՀՀ դրամ:

- Բանկի զուտ տոկոսային մարժան 2024թ.-ի համեմատ աճել է 0.4 տոկոսային կետով և կազմել 5.6%:

- Բանկի զուտ շահույթը կազմել է 11,705 մլն ՀՀ դրամ:

- Բանկի ընդհանուր կապիտալը 2024թ.-ի համեմատ աճել է 12.7%-ով և կազմել 78,734 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 13.4%:

- 2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի մասնաճյուղային ցանցն ընդգրկել է թվով 49 մասնաճյուղ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ ԹՎԵՐՈՎ

Մասնաճյուղ
- 49

Տերմինալ
- 99

Այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ
- 10

ԱԳՄ
- 134

Առևտրի կետ
- 5,981

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

AraratBank

Հարգելի՛ բաժնետերեր, հաճախորդներ, գործընկերներ,

2025 թվականը Բանկի համար հերթական անգամ փորձությունների, փոփոխվող միջավայրին հարմարվելու և միաժամանակ առաջ նայելու տարի էր: Տնտեսական, աշխարհաքաղաքական և տեխնոլոգիական զարգացումները մեզնից պահանջեցին ավելի մեծ արագություն, ճկունություն և պատասխանատվություն: Այս պայմաններում Բանկը շարունակեց անխափան մատուցել իր ծառայությունները, պահպանել հաճախորդների վստահությունը և գործել այն զգուշավոր ու հետևողական մոտեցումներով, որոնք մշտապես եղել են մեր գործունեության հիմքում:

Անցած տարին կարևոր էր ոչ միայն ֆինանսական արդյունքների և գործարար կայունության, այլև մեր հարաբերությունների որակի տեսանկյունից: Մենք շարունակեցինք խորացնել համագործակցությունը բաժնետերերի, հաճախորդների և գործընկերների հետ՝ գիտակցելով, որ բանկի իրական ուժը չափվում է ոչ միայն թվերով, այլև վստահությամբ, երկարաժամկետ պատասխանատվությամբ և այն արժեքով, որը մենք ստեղծում ենք մարդկանց, բիզնեսի և երկրի տնտեսության համար:

Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց թվային ծառայությունների զարգացմանը: Մենք շարունակեցինք ընդլայնել թվային գործիքակազմը, ամրապնդել ներքին կարողությունները և ձևավորել ավելի արագ, ավելի պարզ և ավելի հաճախորդակենտրոն բանկային փորձառություն: Վստահ եմ, որ Բանկը առաջիկա տարիներին Հայաստանի բանկային համակարգում պետք է ունենա ավելի տեսանելի և ազդեցիկ թվային ներկայություն ՝ պահպանելով այն մարդկային մոտեցումը, որի շնորհիվ հաճախորդը Բանկի հետ հարաբերություններում զգում է վստահություն, հարգանք և հոգատարություն:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

Այս անցումը մեզ համար միայն տեխնոլոգիական փոփոխություն չէ: Այն կառավարման, մշակույթի, մտածողության և պատասխանատվության նոր փուլ է: Բանկը պետք է շարունակի զարգանալ որպես ժամանակակից, մրցունակ և վստահելի ֆինանսական հաստատություն՝ հիմնված ռիսկերի արդյունավետ կառավարման, թափանցիկության, պրոֆեսիոնալիզմի և երկարաժամկետ արժեք ստեղծելու սկզբունքների վրա:

Միևնույն ժամանակ մենք հավատարիմ ենք մնում մեր ավանդական արժեքներին՝ ազնիվ գործելաոճին, գործընկերային վերաբերմունքին, հաճախորդի նկատմամբ պատասխանատվությանը և մեր հայրենիքի տնտեսական ամրապնդմանը նպաստելու հանձնառությանը: Մեզ համար բանկային գործունեությունը միայն ծառայությունների մատուցում չէ՝ այն նաև մասնակցություն է երկրի զարգացմանը, ընտանիքների բարեկեցությանը, գործարար նախաձեռնությունների կայացմանը և Հայաստանի ապագայի նկատմամբ վստահության ամրապնդմանը:

Հավատացած եմ, որ Բանկն ունի անհրաժեշտ կամք, մասնագիտական ներուժ և միասնականություն՝ առաջիկա փուլում ավելի արագ և համարձակ զարգանալու համար: Մենք շարունակելու ենք արդարացնել մեզ ցուցաբերված վստահությունը՝ պահպանելով մեր արժեքները, ուժեղացնելով մեր կարողությունները և կառուցելով այնպիսի բանկ, որն արժանի է իր հաճախորդների վստահությանը և օգտակար է մեր հայրենիքին:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի՛ բաժնետերեր, հաճախորդներ և գործընկերներ,

2025թ.-ին գրանցված արդյունքները, կայունությունն ու հեղինակությունը տարիների հետևողական աշխատանքի, պատասխանատու կառավարման և բաժնետերերի երկարաժամկետ տեսլականի արդյունք են: Շնորհակալ եմ բոլորին, ովքեր ստեղծել են այն ամուր հիմքը, որի վրա այսօր կառուցվում է ԱրարատԲանկի հետագա զարգացման փուլը:

Ֆինանսական ոլորտն այսօր խորքային փոփոխությունների փուլում է. արագ փոխվում են հաճախորդների սպասումները, զարգանում են թվային տեխնոլոգիաներն ու արհեստական բանականությունը, իսկ կիբեռանվտանգությունն ու գործառնական կայունությունը դառնում են առանցքային: Միաժամանակ անփոփոխ են մնում մրցունակ և հուսալի բանկի հիմնարար արժեքները՝ վստահությունը, պատասխանատվությունը և ֆինանսական կայունությունը:

Այս պայմաններում մեր նպատակը միայն աճի ապահովումը չէ, այլ ավելի կայուն, ավելի արդյունավետ, ավելի տեխնոլոգիական և հաճախորդակենտրոն բանկ դառնալն է: Առաջիկա տարիներին մեր ջանքերը կենտրոնանալու են հինգ ուղղության վրա՝ կայուն ֆինանսական արդյունքներ, հաճախորդների փորձառության շարունակական բարելավում, թվային փոխակերպում , ռիսկերի կառավարման ու կիբեռանվտանգության ամրապնդում և մեր աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացում:

Իմ պարտավորությունը հստակ է՝ պահպանել և ավելացնել բաժնետերերի համար ստեղծվող արժեքը՝ միաժամանակ ապահովելով և ամրապնդելով ԱրարատԲանկի դերը՝ որպես վստահելի գործընկեր իր հաճախորդների, աշխատակիցների, կարգավորող մարմինների և հասարակության համար:

Շնորհակալ եմ վստահության և շարունակական աջակցության համար:

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԵՎՈՐ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

AraratBank

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ու FMO Հոլանդական զարգացման բանկի միջև կնքված պայմանագրի շրջանակներում ներգրավվել է 15 մլն ԱՄՆ դոլարի չափով միջոցներ, որոնք ուղղվել են կանաչ և սոցիալական անհավասարության կրճատմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորմանը:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ և ՎԶԵԲ-ի միջև ստորագրված երկու պայմանագրերի շրջանակներում ներգրավվել է ընդհանուր 10 մլն ԱՄՆ դոլարի չափով միջոցներ:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ 10-րդ անգամ արժանացել է Գերմանական առաջատար ֆինանսական հաստատություններից մեկի՝ Commerzbank AG բանկի «Որակի գերազանցության» (STP Award 2025) մրցանակին:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ արժանացել է Mastercard-ի 2025թ-ի «Մարքեթինգային ռազմավարության գերազանցություն» մրցանակի:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ արժանացել է RIA Money Transfer համակարգի «2025թ. տարվա գործընկեր Հայաստանում» մրցանակի:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ արժանացել է Visa-ի «Վստահելի գործընկերություն» 2025 մրցանակի:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ Global Finance միջազգային հեղինակավոր ամսագրի կողմից ճանաչվել է 2025թ. Հայաստանի «Լավագույն ենթապահառու բանկ»:

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ «Կանանց հզորացման սկզբունքները Հայաստանում» համաժողովի շրջանակներում ստացավ ՄԱԿ-ի «Կանանց հզորացման սկզբունքները» (UN WEPs) ստորագրած ընկերության վկայագիր:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ԱԿՏԻՎՆԵՐ

2025թ. ՀՀ տնտեսության և ֆինանսական համակարգի համար բարենպաստ տարի էր՝ տնտեսական աճի շարունակականության, ֆինանսական միջնորդության խորացման և բանկային համակարգի բարձր արդյունքների տեսանկյունից: Բարձր տնտեսական ակտիվությանը նպաստեց ներքին պահանջարկի՝ մասնավոր սպառման պահպանվող բարձր մակարդակը: Կրկին շարժիչ ուժերից էին շինարարության և ծառայությունների հատվածների բարձր աճի տեմպերը:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ համար 2025թ. նույնպես բարենպաստ էր կուտակած հնարավորությունների օգտագործման, ռազմավարական ուղղություններով ներդրումների մեղմ սակայն կայուն աճի և շահութաբերության բարձր մակարդակի ապահովման տեսանկյունից:

2025թ.-ի տարեկան արդյունքներով Բանկի ակտիվները կազմել են 423,263 մլն ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշն աճել է 0.9%-ով կամ 3.8 մլրդ ՀՀ դրամով: Բանկի ակտիվների վերջին տասը տարիների միջին աճի տեմպը կազմել է 12.4%:

Ընդհանուր ակտիվներ, մլն. ՀՀ դրամ



Ընդհանուր ակտիվներում եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը կազմել է 91.8%

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

AraratBank

31.12.2025



- Հաճախորդներին տրված վարկեր
- Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ
- Ներդրումային արժեթղթեր
- Դրամական միջոցներ
- Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ
- Այլ ակտիվներ

31.12.2024



ԵԿԱՄՏԱԲԵՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

AraratBank

(մլն << դրամ)

	2025	2024	Փոփոխություն	%
Ակտիվներ, այդ թվում՝	**423,263**	**419,489**	**3,774**	**0.90%**
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	**388,312**	**359,894**	**28,417**	**7.90%**
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	*234,157*	*218,114*	*16,044*	*7.36%*
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	*93,294*	*88,803*	*4,490*	*5.06%*
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	*55,235*	*46,643*	*8,592*	*18.42%*
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	*5,626*	*6,335*	*-709*	*-11.19%*
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	***91.74%***	***85.79%***		

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ԵԿԱՄՏԱԲԵՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

AraratBank

31.12.2025



- Հաճախորդներին տրված վարկեր
- Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ
- Ներդրումային արժեթղթեր

31.12.2024



Հաճախորդներին տրված վարկերը 2024թ.-ի համեմատ ավելացել են 7.4%-ով, իսկ պահանջները ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ և ներդրումային արժեթղթերը, համապատասխանաբար 5.1%-ով և 14.9 %-ով: Եկամտաբեր ակտիվների կառուցվածքն էական փոփոխությունների չի ենթարկվել, սակայն աճի տեմպերի տարբերությամբ պայմանավորված փոքր աճ արձանագրել է արժեթղթերի տեսակարար կշիռը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ՎԱՐԿԵՐ

2025թ.-ի տարեվերջի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի մնացորդը կազմել է 234,157 մլն ՀՀ դրամ: 2024թ.-ի համեմատ ցուցանիշի ավելացումը կազմել է 7.4% կամ 16,044 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 13.5%:
2025թ.-ին Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր ակտիվների 55.3%-ը՝ նախորդ տարվա 52.0%-ի դիմաց, ինչը պայմանավորված է վարկավորման համեմատաբար բարձր տեմպերի հետ:

Հաճախորդների տրված վարկեր, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Բանկի կողմից տրամադրված բոլոր վարկատեսակների գծով արձանագրվել է ծավալների ավելացում՝ հիփոթեքային վարկերի ծավալը 2025թ.-ի տարեվերջի դրությամբ կազմել է 38,358 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 35,526 մլն ՀՀ դրամի դիմաց, աճը՝ 8.0%: Գրավով ապահովված սպառողական վարկերը 2024թ.-ի համեմատ աճել են 396 մլն ՀՀ դրամով կամ 0.7%-ով և կազմել են 53,444 մլն ՀՀ դրամ: 2025թ.-ին աճել են նաև գյուղատնտեսական վարկերը 3.4%-ով, այլ սպառողական վարկերը 21.9%-ով, ոսկու գրավով վարկերը՝ 24.7%-ով: Կորպորատիվ հաճախորդների վարկավորման ծավալները հաշվետու տարվա ավարտին կազմել են 116,308 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 10.2%-ով:

Տրամադրված վարկերի կառուցվածք 31.12.2025





Տրամադրված վարկերի կառուցվածք 31.12.2024



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՎԱՐԿԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2025թ.-ի ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռները ընհանուր վարկերում մեծ փոփոխությունների չեն ենթարկվել: Այնուամենայնիվ, իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռն ավելացել է 1.1%-ով և կազմել 49.0%:

31.12.2025



31.12.2024



ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ

2025թ.-ի ընթացքում ԱրարատԲանկն ակտիվ է եղել նաև արժեթղթերի շուկայում: Ներդրումային քաղաքականության շրջանակներում արժեթղթերի պորտֆելն ավելացել է 14.9%-ով կամ 7,920 մլն ՀՀ դրամով և կազմել է 60,897 մլն ՀՀ դրամ: Արժեթղթերի վերջին տասը տարվա միջին աճի տեմպը ևս կազմել է 14.9%:

Ներդրումային արժեթղթեր, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐ

Ներդրումային պորտֆելում ՀՀ պետական պարտատոմսերի տեսակարար կշիռն կազմել՝ 73.4%:







ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ.-ի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 344,529 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.5%-ով կամ 5,129 մլն ՀՀ դրամով:



Նախորդ տարվա համեմատ պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորված է հաճախորդների ցպահանջ միջոցների արտահոսքով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄՆԵՐ

Տարեվերջին Բանկի կողմից միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված փոխառությունները կազմել են 29,460 մլն ՀՀ դրամ կամ պարտավորությունների 8.6%-ը: 2024թ.-ի համեմատ ներգրավված միջոցները նվազել են 6.8%-ով: Վերոնշյալը միջազգային շուկաներում տոկոսադրույքների բարձր մակարդակի արդյունք է: Բանկն ակտիվորեն շարունակել է համագործակցությունը մի շարք միջազգային կազմակերպությունների հետ՝ Նիդերլանդների զարգացման բանկ (FMO), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD), Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամ (EFSE), responsAbility Global Microfinance Fund հիմնադրամ, Blue Orchard, Green for Growth Fund հիմնադրամ, Եվրասիական զարգացման բանկ (EDB), SYMBIOTICS SICAV ընկերություն և այլ ֆինանսական կազմակերպություններ:

Միջազգային ներգրավումներ, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

AraratBank

31.12.2025



- Ժամկետային ավանդներ
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ միջոցներ
- Միջազգային և այլ ֆին. կազմ. ստացված միջոցներ
- Այլ պարտավորություններ
- Բանկի կողմից թողարկված արժեթղթեր
- Պարտավորություններ բանկերի նկատմամբ
- Հետգնման պայմանագրերով վճարման ենթակա գումարներ
- Ստորադաս փոխառություն

31.12.2024



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐ

Ժամկետային ավանդները հաշվետու տարվա ավարտին կազմել են 151,821 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների շուրջ 44.1%-ը և 2024թ.-ի համեմատ ավելացել են 3.2%-ով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 20.7%: Մեկ տարվա ընթացքում ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներն աճել են 6.0%-ով, իսկ իրավաբանական անձանց ավանդները նվազել են 9.4%-ով:

Ժամկետային ավանդներ, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

AraratBank

31.12.2025



31.12.2024



իրավաբանական անձինք

ֆիզիկական անձինք

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎՆԵՐ ԵՎ ՑՊԱՀԱՆՋ ՄԻՋՈՑՆԵՐ

Բանկի ընթացիկ հաշիվներն ու ցպահանջ միջոցները հաշվետու տարվա ավարտին կազմել են 128,261 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների շուրջ 37.2%-ը: 2024թ.-ի համեմատ ցուցանիշը նվազել է 10.4%-ով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 13.5%: Ֆիզիկական անձանց միջոցների տեսակարար կշիռը կազմել է 66.9%, իսկ իրավաբանական անձանց միջոցների տեսակարար կշիռը՝ 33.1%:

Ընթացիկ հաշիվներ եւ ցպահանջ միջոցներ, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2025թ.-ի վերջի դրությամբ Բանկի սեփական կապիտալը կազմել է 78,734 մլն ՀՀ դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 8,903 մլն ՀՀ դրամով կամ 12.7%-ով: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է շահաբաժինների վճարում: Ընդհանուր կապիտալի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է 2025թ.-ի տարեկան գործունեության արդյունքում գեներացված 11,705 մլն ՀՀ դրամ զուտ շահույթով: Կապիտալի վրա դրական ազդեցություն է ունեցել նաև արժեթղթերի վերագնահատման պահուստների փոփոխությունը:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմել է 9,366,725 հազար ՀՀ դրամ: Համաձայն Բանկի կանոնադրության՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,873,375 սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 դրամ անվանական արժեքով:

2025թ.-ի ընդհանուր կապիտալի փոփոխության արդյունքում մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը կազմել է 42,028 ՀՀ դրամ՝ 2024թ.-ի 37,276 ՀՀ դրամ ցուցանիշի համեմատ աճելով 12.7%-ով:

Բանկի բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքի դինամիկան, ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 38,859 մլն ՀՀ դրամ՝ ավելանալով 11.0%-ով կամ 3,847 մլն ՀՀ դրամով:
Տոկոսային եկամուտների աճին նպաստել է հիմնականում հաճախորդներին տրված վարկերի գծով ստացված տոկոսային եկամուտների 3,283 մլն ՀՀ դրամ կամ 13.0% աճը: Վերջինս ինչպես ներդրումների ծավալների ավելացման, այնպես էլ կառուցվածքային փոփոխությունների արդյունք է:
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներից ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը ընդհանուրում կազմել է 8.6% նախորդ տարվա 7.8%-ի փոխարեն՝ արդյունքում գեներացնելով 3,336 մլն ՀՀ դրամի եկամուտ:
Ներդրումային արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտները նախորդ տարվա համեմատ ավել են 4.3%-ով և կազմել 5,169 մլն ՀՀ դրամ:
Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքը բերված է ստորև.





ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 15,286 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7.0%-ով կամ 1,004 մլն ՀՀ դրամով:

Բանկի հաճախորդների ցպահանջ և ժամկետային ավանդների դիմաց կատարված ծախսերը 2025թ.-ին կազմել են 11,303 մլն ՀՀ դրամ, իսկ տեսակարար կշիռը ընդհանուր տոկոսային ծախսերում կազմել է 73.9%: 2024թ. համեմատ ծախսերն ավելացել են 14.8%-ով:

Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց կատարված տոկոսային ծախսերը կազմել են 375 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա ցուցանիշից պակաս լինելով 4.2%-ով:

2024թ.-ի համեմատ նվազել է բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից նեգրավված ավանդների և այլ փոխառու միջոցների գծով ծախսերի տեսակարար կշիռը՝ 25.0%-ի դիմաց կազմելով 19.0%: Նշված ծախսերը կրճատվել են 18.8%-ով կամ 671 մլն ՀՀ դրամով, ինչը պարտավորությունների կառուցվածքային փոփոխության արդյունք է, քանի որ մյուս կողմից ավելացել են ռեպո համաձայնագրերի գծով ծախսերը 224 մլն ՀՀ դրամով:

2025թ.-ին Բանկի կողմից ստացված զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները կազմել են 23,573 մլն ՀՀ դրամ՝ 2024թ. համեմատ ավելանալով 2,843 մլն ՀՀ դրամով կամ 13.7%-ով:

Բանկի զուտ տոկոսային մարժան 2024թ.-ի համեմատ ավելացել է 0.4 տոկոսային կետով և կազմել 5.6%:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

AraratBank

31.12.2025



- Հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց
- Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց
- Բանկերից և այլ ֆին. կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց
- Ռեպո պայմանագրերի դիմաց
- Ստորադաս փոխառության դիմաց
- Այլ ներգրավված միոջցներ
- Այլ

31.12.2024



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են 5,392 մլն ՀՀ դրամ՝ 2024թ.-ի համեմատ աճելով 1.9%-ով կամ մոտ 98 մլն ՀՀ դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերը կազմել են 3,021 մլն ՀՀ դրամ՝ 2024թ.-ի համեմատ աճելով 5.1%-ով կամ 148 մլն ՀՀ դրամով:

Արդյունքում 2025թ.-ին Բանկի զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են 2,372 մլն ՀՀ դրամ՝ պակաս լինելով 2024թ.-ի համապատասխան ցուցանիշից 49 մլն ՀՀ դրամով կամ 2.0%-ով: 2024թ.-ի համեմատ նվազել են վճարային քարտերով գործառնությունների գծով ստացված զուտ միջնորդավճարները՝ մոտ 19.2%-ով և ավելացել են երաշխավորությունների գծով վճարված միջնորդավճարները՝ 50.1%-ով:

2025թ.-ի ընթացքում Բանկն արտարժութային գործառնություններից գեներացրել է 4,058 մլն ՀՀ դրամի զուտ եկամուտ: 2024թ.-ի համապատասխան ցուցանիշից եկամուտները նվազել են 847 մլն ՀՀ դրամով կամ 17.3%-ով:

Բանկի ընդհանուր վարչական ծախսերը կազմել են 12,644 մլն ՀՀ դրամ 2024թ.-ի 11,959 մլն ՀՀ դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշի 5.7% տարբերությունը պայմանավորված է անձնակազմի գծով իրականացված ծախսերի աճով, որոնք 2024թ.-ի համեմատ ավելացել են 318 մլն ՀՀ դրամով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ
ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2025թ.-ին Բանկի զուտ շահույթը կազմել է 11,705 մլն ՀՀ դրամ:

Բանկի շահույթ, մլն ՀՀ դրամ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ | ՇԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ստորև բերված են Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները:

Բանկի շահութաբերության գործակիցներ



Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 6,248 ՀՀ դրամ:

ԹՎԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ.-ին Բանկի ռազմավարական առաջնահերթություն համարվող թվային բանկային համակարգն ապահովեց իր շարունակական զարգացումը: Ուշադրության կենտրոնում էր մասնավորապես AraratMobile բջջային հավելվածի կատարելագործումը: Այս ուղղությամբ իրականացված միջոցառումներն ու ձեռք բերված հաջողությունները ներկայացված են ստորև:

- Նոր ֆունկցիոնալների ներդնում՝
  - Գաղտնաբառի և ՊԻՆ կոդի առցանց վերականգնում, հավելվածի ապաբլոկավորման հնարավորություն
  - Քարտի ՊԻՆ կոդի ստեղծում և փոփոխություն, կցված քարտերի մնացորդը դիտելու հնարավորություն
  - Քարտից քարտ փոխանցման բարելավումներ, ArcaQR վճարումներ
  - Գրանցման/նույնականացման նոր հնարավորություն, անձնական տվյալների թարմացման հնարավորություն
  - Պետ բյուջե փոխանցումներ ՀՎՀՀ-ով
  - Հեռախոսահամարով փոխանցումներ (ArcaPay)
  - Հայտարարգրերի մասին տեղեկատվություն
  - Դեպի ՌԴ հեռախոսահամարով փոխանցումներ
  - Վերանախագծում՝ Փոխանցումներ, վարկեր, Իմ մեքենաներ բաժինների
  - ԴԱՀԿ պարտավորությունների ցուցադրում
- AraratMobile հավելվածի օգտատերերի թվի զգալի աճ՝ 22%:
- AraratMobile հավելվածի գործարքների քանակի աճ՝ 50%:
- AraratMobile հավելվածով ամսական ակտիվություն ցուցաբերող օգտատերերի թվի աճ՝ 24%:

ՄԵՐ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ

Հաճախորդների գոհունակության ապահովումը բանկի հանձնառություններից կարևորագույն տեղ ունի, որն արտահայտվում է սպասարկման մարդակենտրոն մոտեցումներով, ծառայությունների լայն շրջանակով, մրցունակ պայմաններով, գործընկերային և երկարաժամկետ հարաբերությունների հաստատմամբ և պատասխանատու վվության բարձր մշակույթով: Այս առումով սպասարկող անձնակազմը հանդիսանում է հաճախորդի հետ կապի առաջնային օղակ, ով ոչ միայն ներկայացնում է Բանկը, այլ նաև ուղղակիորեն ապահովում է ծառայությունների իրացումը: Հետևաբար, Բանկը մշտապես ներդրումներ է կատարում անձնակազմի մասնագիտական զարգացման և հաղորդակցման կարողությունների ամրապնդման ուղղությամբ:

Դեռևս 2020թ.-ին մեկնարկած վերաբրենդավորման գործընթացին զուգահեռ 2021-2025թ.-ին Բանկը փորձել է նաև նորովի ձևակերպել Բանկի հիմնարար արժեքները, որոնք կհանդիսանան հիմնասյուներ նոր կորպորատիվ մշակույթի ձևավորման համար և կնպաստեն հաճախորդների նկատմամբ մոտեցումների փոփոխությանը՝ հաճախորդակենտրոն սկզբունքների ձևավորմանը և նրանց բավարարվածության ու լոյալության մակարդակի պահպանմանն ու բարձրացմանը:

Կարևորելով անձնակազմի պրոֆեսիոնալիզմը, հաճախորդների սպասարկման որակի բարձրացումը և համալիր ծառայությունների մատուցումը՝ Բանկը շարունակաբար իրականացնում է համապատասխան քայլեր հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման (CRM) համակարգի զարգացման ուղղությամբ: Այս հանգամանքը կարևորվում է նաև՝ ելնելով ռազմավարության հիմքում դրված ինտենսիվ աճի և խաչաձև վաճառքներ իրականացնելու սկզբունքից:

Զգուշավոր և գրագետ քաղաքականության արդյունքում Բանկին հաջողվել է ապահովել վերջին մեկ տարվա ընթացքում ակտիվ հաճախորդների թվաքանակի աճ: 2025թ ընթացքում ակտիվություն են ցուցաբերել թվով 212,608 հաշվետերեր, որտեղ ֆիզիկական անձանց բաժին է ընկել 94.0%, իրավաբանական անձ հաճախորդներին՝ 6.0%: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա ընթացքում առցանց տիրույթում անկանխիկ գործարքների քանակի ավելացումը փաստում է նաև AraratMobile բջջային հավելվածի արդյունավետության մասին:

Թեժ մրցակցության պայմաններում 2025թ.-ին Բանկը պահպանել է իր հաճախորդների կայուն բազան և 2024թ.-ի համեմատ ավելացրել հաճախորդների թիվը:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Ներքին աուդիտը Բանկի Խորհրդին և Ավագ ղեկավարությանը տրամադրում է անկախ, ռիսկերի վրա հիմնված և անաչառ հավաստիացում, խորհուրդ, ներըմբռնում և կանխատեսություն, ուժեղացնում է Բանկի կարողությունը՝ ստեղծելու, պաշտպանելու և պահպանելու արժեքներ:

Ներքին աուդիտի գործառույթը հանդիսանում է կորպորատիվ կառավարման կարևորագույն տարրերից մեկը, այն գործառութային առումով հաշվետու է Բանկի Խորհրդին (կանոնադրություն, ռազմավարական պլան, տարեկան ծրագրեր, հաշվետվություններ, ռեսուրսներ և բյուջե), Աուդիտի հանձնաժողովին և վարչական առումով (ներքին կարգապահական հարցեր և այլն) Բանկի Գործադիր տնօրենին:

Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումը հետևում է Ներքին աուդիտորների ինստիտուտի մասնագիտական գործունեության միջազգային հայեցակարգի պարտադիր տարրերին, որոնք ներառում են Ներքին աուդիտի միջազգային ստանդարտները և թեմատիկ պահանջները:

Ներքին աուդիտի գործառութային պարտականությունները սահմանված են ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Ներքին աուդիտի կանոնադրությամբ:

Ներքին աուդիտի ծառայությունների շրջանակն ընդգրկում է Բանկի ողջ գործունեությունը, ներառյալ բոլոր գործառույթները, ակտիվները և անձնակազմը: Ներքին աուդիտի գործունեության շրջանակը ներառում, բայց չի սահմանափակվում, փաստերի օբյեկտիվ ուսումնասիրություններով՝ Խորհրդին և Ավագ ղեկավարությանը կառավարման, ռիսկերի կառավարման և վերահսկման գործընթացների համարժեքության և էֆեկտիվության վերաբերյալ՝ անկախ հավաստիացման և խորհրդատվական ծառայություններ տրամադրելու նպատակով:

Իրականացված աուդիտի արդյունքները նպաստել են բացահայտված խնդիրների վերացման նպատակով Ներքին աուդիտի առաջարկությունների և եզրակացությունների հիման վրա ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը՝ ուղղված Բանկի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

ARARATBANK

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻ ներքին հսկողական համակարգը գործում է շուկայում արդի զարգացող պահանջներին համահունչ: Համապատասխանության ապահովման խումբը օժանդակում է գործարար գործընթացների իրականացմանը օրենսդրության, նորմատիվ և ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև նպաստում է էթիկական կորպորատիվ մշակույթի պահպանմանը՝ պարբերաբար կազմակերպելով Բանկի կորպորատիվ արժեքները ներկայացնող վարքագծի կանոնների, ինչպես նաև մեծ պատասխանատվություն կրող աշխատակիցների համար հիմնական իրավական և վերահսկողական պարտավորությունների վերաբերյալ սեմինարներ:

Իրականացվում է Բանկում գործող պայմանագրերի ՀՀ օրենսդրությանը համապատասխանության և ավտոմատացման գործընթացի վերահսկողություն:

Առկա գործընթացների ռիսկերի նվազեցման, արդիականացման և բարելավման նպատակով իրականացվում են գործառնությունների ընթացիկ ստուգումներ և ուսումնասիրություններ:

Համապատասխանության ապահովման խմբի կողմից ակտիվ համագործակցություն է իրականացվում բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների հետ:
Համապատասխանության ապահովման խումբը մասնակցում է գործառնական ռիսկերի կառավարման գործառույթներին և քննարկումներին, ներկայացնում համապատասխան լուծումների առաջարկություններ: Այն հնարավորություն է տալիս ընթացքում բացահայտել, գնահատել առկա խնդիրները և մշակել անհրաժեշտ լուծումներ, որոնք ուղղված են գործող մեխանիզմների բարելավմանը և ընթացիկ հսկողության մեխանիզմների անընդհատության սկզբունքով գործունեության ապահովմանը:

Ներքին իրավական ակտերը ուսումնասիրվում են ըստ առանձին գործառնությունների ՀՀ օրենքների և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերի համապատասխանության տեսանկյունից, ինչպես նաև տրվում են օպտիմալացման առաջարկություններ:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Բանկն իր գործունեության ընթացքում առերեսվում է ինչպես արտաքին միջավայրից եկող, այնպես էլ ներքին միջավայրում առկա բազում ռիսկերի հետ: Բանկն անընդհատ մշտադիտարկում է ռիսկերի միջավայրը, բացահայտում է Բանկի գործունեության վրա ազդող էական և նշանակալի ռիսկերը, բացահայտված ռիսկերի կառավարման նպատակով մշակում է նոր քաղաքականություններ և մեխանիզմներ:
Բանկը պլանավորում է պահպանել իրացվելիության, գործառնական, վարկային և շուկայական ռիսկերի այնպիսի մակարդակ, որի դեպքում Բանկն ամբողջովին կիրացնի իր առջև դրված նպատակները՝ պահպանելով ֆինանսական կայունությունը, այն է՝ ռիսկերի մակարդակներն առանձին-առանձին և Բանկի մակարդակով (Enterprise risk management) լինեն ռիսկի ախորժակի սահմաններում:

Իրացվելիության ռիսկի կառավարման տեսանկյունից Բանկում ամենօրյա կտրվածքով իրականացվում է Բանկի կողմից սահմանված իրացվելիության ցուցանիշների հսկողություն: Ցուցանիշների խախտման դեպքում անմիջապես վերլուծվում են խախտման պատճառները, միջոցներ են ձեռնարկվում խախտումները վերացնելու ուղղությամբ: Բացի այդ, իրականացվում է իրացվելության ռիսկի կարճաժամկետ և միջնաժամկետ գնահատում, կանխատեսում որպես կանխարգելիչ գործառույթ:

Շուկայական ռիսկի կառավարման տեսանկյունից Բանկը սահմանել է արտարժութային ռիսկի սահմանաչափեր, տոկոսադրույքի կառավարման նպատակով իրականացվում են ժամկետայնության ճեղքվածքի վերլուծություններ, տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների վերլուծություններ, պարբերաբար մոնիտորինգներ են իրականացվում շուկայում տոկոսադրույքների փոփոխությունների վերաբերյալ:
Աշխարհաքաղաքական միջավայրի կտրուկ փոփոխությունների և ֆորսմաժորային իրավիճակներում Բանկի կողմից իրականացվում են լրացուցիչ սթրես-թեստեր, որոնք ենթադրում են աշխարհաքաղաքական շոկին հատուկ բազմագործոն սցենարներ՝ սպասվող հնարավոր կորուստները կանխատեսելու և դրանք նվազագույնի հասցնելու նպատակով:

Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով, հաշվի առնելով տնտեսական բացասական զարգացումների և վարկային պորտֆելի որակի վատթարացման սպասումները, Բանկը կշարունակի վարել զգուշավոր վարկային քաղաքականություն, միաժամանակ, ուշադրության կենտրոնում պահելով գործող վարկային պորտֆելում առկա զգայուն վարկերը և ակտիվ միջոցներ ձեռնարկելով խոցելի ոլորտների վարկերի վերադարձման ուղղությամբ:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Բանկը նախատեսում է ավելի արդյունավետ դարձնել վարկային ռիսկի կառավարման առկա քաղաքականությունը:

Բանկի ռիսկի ախորժակով առաջին մակարդակի ցուցանիշներով սահմանված է Բանկի նպատակային ռիսկի պրոֆիլը, որն իրենից ներկայացնում է ներքին սահմանաչափերի համակարգ, որն էլ իր հերթին հնարավորություն է ընձեռում սկզբնական փուլում հսկողություն իրականացնել Բանկի ռիսկի ախորժակի պահպանման նկատմամբ: Բանկի գործող ռիսկի ախորժակն իր մեջ ներառում է հետևյալ հիմնական ուղենիշները՝

Բանկի կողմից ընդունված ռիսկի մեծությունը չպետք է հասնի այնպիսի մակարդակի, որ հանգեցնի Բանկի գործունեության դադարեցմանը՝ այդ թվում շոկային իրավիճակներում:

Անկանխատեսելի կորուստների դեպքում Բանկի կապիտալի մեծությունը պետք է բավարարի Բանկի վարկատու գործընկերների պահանջները:

Բանկի կողմից իրականացվող գործառնությունների դեպքում դրամական հոսքերի կառուցվածքը և իրացվելիության բուֆերները պետք է երաշխավորեն հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ժամանակին կատարումը՝ կարճաժամկետ հատվածներում, իսկ ակտիվների իրացվելության տեսանկյունից արդյունավետ կառուցվածքը երկարաժամկետ հատվածում: Այդ նպատակով Բանկը սահմանել է իրացվելիության գծով մի շարք ցուցանիշներ, որոնք վերահսկվում են օրական, ամսական և եռամսյակային կտրվածքով:

Բանկի ակտիվների և պարտավորությունների գործող կառուցվածքն ապահովում է Բանկի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և համապատասխանում է Բանկի բիզնես մոդելին:
Իր գործունեության ընթացքում Բանկը ձգտում է խուսափել կենտրոնացումներից՝ սահմանելով կենտրոնացումների թույլատրելի սահմանաչափեր:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Իր գործունեության ընթացքում Բանկը ձգտում է խուսափել կենտրոնացումներից՝ սահմանելով կենտրոնացումների թույլատրելի սահմանաչափեր:

Բանկը վարկային պորտֆելի կառավարման նպատակով սահմանել է վարկային պորտֆելի ռիսկի զսպման մի շարք ցուցանիշներ՝ հաշվի առնելով Բանկի վարկային ռիսկի պրոֆիլը, ռազմավարությունը և շուկայում ակնկալվող փոփոխությունները:

Բանկն ապահովում է կայուն զարգացում և արդյունավետ գործունեություն երկարաժամկետ հորիզոնում: Բանկը պատշաճ կերպով ապահովում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջները:

Իր գործունեության ընթացքում պահպանում է բարի համբավ՝ խուսափելով այնպիսի գործողություններից, որոնք կվնասեն իր գործարար համբավին:

Շուկայական ռիսկերի կառավարման տեսանկյունից Բանկում իրականացվում է տոկոսադրույքի և արտարժութային ռիսկերի կառավարում: Նշված ռիսկերի բացահայտման, գնահատման նպատակով Բանկում իրականացվում են զգայունության վերլուծություններ, արտարժութային դիրքերի հաշվարկներ, սթրես թեստեր: Բանկը շարունակում է կատարելագործել շուկայական ռիսկերի կառավարման համար կիրառվող մոդելները՝ ներդնելով միջազգային լավագույն փորձը :

Գործառնական ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով յուրաքանչյուր շաբաթ իրականացվում է Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից Գործառնական ռիսկերի կառավարման էլեկտրոնային շտեմարանի միջոցով գրանցված միջադեպերի վերլուծություն: Գործառնական ռիսկերի կառավարման հանձնաժողովի՝ յուրաքանչյուր շաբաթ տեղի ունեցող նիստերի ժամանակ տրվում են հանձնարարականներ համապատասխան ստորաբաժանումներին խնդիրների լուծման և գործառնական ռիսկերի նվազեցման նպատակով: Յուրաքանչյուր եռամսյակ իրականացվում է նաև գործառնական ռիսկի հաշվարկ: Ռիսկերի կառավարման գործընթացներն իրականացվում են Բանկի Խորհրդի կողմից հաստատված ռիսկի ախորժակի քաղաքականությանը համաձայն և գտնվում են Բանկի ուշադրության կենտրոնում: Բանկում մշտապես ուսումնասիրվում և կիրառվում է միջազգային փորձը՝ բարձրացնելով ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը՝ նպատակ ունենալով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ մակարդակը:

AraratBank

AraratBank
Available on the App Store
GET IT ON Google Play
(+374)10 59 23 23
Buzand St., bldg. 87, prem. 85, 0002 Yerevan, Armenia
info@araratbank.am | araratbank.am